հայ կայսր Յովհաննէս Զմշկիկն է, բայց սա վէպում կին արմատ է և կոչւում է «շատ գեղեցիկ փեհլուան» (№ 2, ԺԲ, էջ 37)։ Յայտնի է որ նա շատ հռչակաւոր էր, եղել է Տարօնում և դաշնակցութիւն ունեցել Աշոտ Ողորմածի հետ։ Սորա այս սեռափոխութիւնն էր միայն, որ մեզ տարօրինակ էր թուում և դժուարացնում ցարդ այս կարծիքը յայտնելու. սակայն երբ Աստղիկ դիցուհին Զոյանց վէպում Պարոն և դիւցազն է դարձել, այլևս զարմանալու չէ։

Այս տարօրինակ հանգամանքը Բ. Խալաթեանը բացատրում է Մ. Ուռհայեցու յիշած դէպքով։ Զմշկիկը պաշարում է Ամիդ քաղաքը, որի տէրը կին էր և Համաուն Տաճկաց ամիրայի քոյր, առաջ Զմշկիկի սիրականը. Զմշկիկը տուել էր Համիդը իւր այդ «կնոջը», որ Զմշկիկի հայրենիք Խոզանայ գաւառի կողմերից էր։ «Իւր հերոսի մահը հիմնաւորելու համար, որ ընկնում էր իւր դաւաճանութեան համար Զմեշկիկ սուլթանի ձեռքից, ժողովուրդն անգիտակցաբար փոխադրել է վերոյիշեալ աւանդութիւնը Դաւթի վերայ, կայսեր անունը տալով նորա սիրուհուն[1]»։

Այս բացատրութիւնը թերևս յաջող համարուէր, եթէ չլինէր Աստղիկի հակառակ դէպքը, մանաւանդ որ ըստ № 3-ի և 9-ի, ոչ թէ Սուլթան Զմուշկը, այլ սորա աղջիկն է Դաւթին սպանողը։ Մեզ թուում է, որ այստեղ շփոթութեանց պատճառը Հայոց անունների սեռական վերջաւորութիւն չունենալն է. ուստի և չնայելով պատմական անցքերի յիշողութիւնը ճիշտ են պահուած, այսպէս «Զմշկեր սուլթանի աղջիկը» Դաւթի «սերմն էր»,—ակնարկ է Զմշկիկի հայ ծագման,—որից և միայն կարող էր սպանուել (№ 3, էջ 51), բայց և այնպէս շփոթութիւն է յառաջացել, այսպէս էլ Աստղիկի դէպքը։

Հայ ժողովուրդը չնայելով որ գիտէ սուլթանը թուրք թագաւոր է. բայց նա այսօր էլ շատ աղջիկների անուն դնում է Սուլթան։ Սուլթան, Սիոն անունը մեղնում այժմ և տղամարդի և կինարմատի անուն է. իսկ Աբշալոյս, Յուսիկ, Սիրական Վարդ և այլն, որ

եւ այլն). Սուլթան Զմշկեր կամ Սուլթան Գրմիժ (№ 3. էջ 40—42. 49—53). Սրլթան Զմուշ. Զմուշկ (№ 11. էջ 38—42) եւ Սրլթան Զմուշ (№ 9. էջ 385. 392—393)։ Այս փոփոխակներից լաւագոյն են № 7 եւ 9։

1. Բ. Խալաթեանց. Հայ ժողովրդական դիցաղնական վէպը հանդերձ քննադատութեամբ. էջ 52—53. Վիեննա 1903։ Այս գրուածքին մենք ծանօթացել ենք 1908 սկիզբներին շնորհիւ մեր ընկեր Ա. Զամինեանի ցուցմունքի. ուստի մեր ցարդ Զոյանց տան մասին գրածներն անկախ են։ Ընթերցողը մի ակնարկով կը համոզուի այդ բանին. մանաւանդ որ զանազանութիւնները շատ խոշոր են եւ աչքի ընկնող. իսկ նմանութիւններն են միայն Դաւիթ եւ Մհէրն, այն էլ շատ տարբերութիւններով։